

### 3 միավոր գնահատվող առաջադրանքներ

1. Ո՞ր բառն է թաքցրել մեղվիկը:

**արվեստի տեսակ + ա + գագաթ =**



**Ա.** շարժանիթ **Բ.** պարագլուխ **Գ.** երգեհոն **Դ.** մարտահրավեր **Ե.** նկարակալ

2. **Բնական, հեզնական, շինական, տիտանական, անվանական** բառերից չորսը «նույն ընտանիքից» են: Ո՞րն է «խորթ»:

**Ա.** շինական **Բ.** բնական **Գ.** հեզնական **Դ.** անվանական **Ե.** տիտանական

3. Ո՞ր դարձվածքն է պատկերված նկարում:

**Ա.** հինգ մատի պես իմանալ  
**Բ.** մատների վրա խաղացնել  
**Գ.** մատների արանքով նայել  
**Դ.** մատի փաթաթան դարձնել  
**Ե.** մատը մատին չտալ



4. *Այն ի՞նչն է, ի՞նչը,  
Շապիկ ունի՝ կարած չի,  
Այլուր ունի՝ ջաղաց չի,  
Փայտ ունի՝ տաշած չի:* (Ժողովրդական հանելուկ)

**Ա.** հաց **Բ.** սեղան **Գ.** դահուկ **Դ.** փշատ **Ե.** ծիրան

5. Ո՞ր բառը նույն ձևով կսոսնձվի **քար, կապ, երկաթ, համբույր, բառ, եղբայր, ուղի** բառաշարքի բոլոր բառերին և կկազմի նոր բառեր:

**Ա.** ձև **Բ.** հայր **Գ.** խաչ **Դ.** աջ **Ե.** գետ

6. **Թաս, թոկ, բակ, հար, գին, գետ, կոթ, բահ, տեգ, սաթ, նիզ** բառաշարքի բառերից տասը միննույն օրինաչափությամբ կազմում են հինգ բառագույգ: Ո՞ր բառն «ընկեր» չունի:

**Ա.** նիզ **Բ.** բահ **Գ.** թաս **Դ.** թոկ **Ե.** բակ

7. Ո՞ր բառն է գաղտնագրվել բերված բառային արտահայտության մեջ:


$$\text{որմ} + \text{այնտեղ} = \text{գերի}$$

Ա. վիմագիր    Բ. պատանդ    Գ. պատվանդան    Դ. որմնադիր    Ե. պատկեր

8. *Մի ձողն ունի երկու ծայր,  
Երկու ձողը՝ ճիշտ չորս ծայր.  
Դու դա գիտես անպատճառ:  
Չորուկեսն էլ, դե ասա՛,  
Թե քանի ծայր կունենա:*


Ա. երեք ծայր    Բ. երկու ծայր    Գ. չորսուկես ծայր    Դ. չորս ծայր    Ե. մեկուկես ծայր

9. Իր պատրաստած օղապարուկի վրա Վահագնը գրեց **օղապարուկ** բառից բառքամոցիով ստացած բառեր: Ո՞ր բառն է սխալ գրել Վահագնը:



Ա. պուրակ    Բ. արդուկ    Գ. դարակ    Դ. արդար    Ե. կարապ

10. Պատասխանի տարբերակներից ո՞րը տեղադրենք մեղվիկի փոխարեն, որ ստանանք չորս նոր բառ:



Ա. տար    Բ. վեր    Գ. բաց    Դ. նախ    Ե. թեր

#### 4 միավոր գնահատվող առաջադրանքներ

11. *Կաղկանձ, փայծաղ, դժողք, տաղտկալի, բողկ, փեղկ, փողք, կմաղք, աղտահանել, շաղկապել* բառերի պուրակով զբոսնելիս Արեգն անզգուշաբար ոտք դրեց *դ* տառով փոսերի վրա: Քանի՞ անգամ նա սայթաքեց:

Ա. մեկ    Բ. երկու    Գ. երեք    Դ. չորս    Ե. ոչ մի

12. Պատասխանի տարբերակների բառերից որո՞ւմ *ի*-ն «ընդունելի հյուր» կլինի:

Ա. ունայն    Բ. ամենայն    Գ. համայն    Դ. լռելյայն    Ե. միայն

13. Գայանեն որոշեց գլուխկոտրուկ կազմել, գրեց իր իմացած թռչնատեսակները՝ *ագռավ, ծիծեռնակ, բու, արագիլ, լորիկ, ճուռակ, կռունկ, որոր*, ջնջեց երկու և ավելի անգամ կրկնվող տառերը, մնացած տառերով ստացավ ևս մեկ թռչունի անուն: Ո՞ր թռչունը ստացավ Գայանեն:

Ա. բազե    Բ. ճայ    Գ. բվեճ    Դ. ճուռակ    Ե. արծիվ

14. *Արևածագին փայտփորիկը նստեց կաղնու ճյուղին, սևեռուն նայեց կեղևի տակ վիստացող բզեզներին:*

Պատասխանի տարբերակներից ո՞րն իր «ընկերը» չունի բերված նախադասության մեջ:

Ա. վաղորդայն    Բ. կտցահար    Գ. ոստ    Դ. խոնվել    Ե. անքնին

15. Ի՞նչ է գաղտնագրվել նկարելուկով:

## ՔՐՆԾԿ

Ա. Քարը ծակվել է:

Բ. քերելով ծակել

Գ. Քարը ծակ է:

Դ. քերված նկար

Ե. Քերեն ու ծակեն:

16. Բառերի ո՞ր եռյակը քառակուսու մեջ լրացնելիս քառակուսու տողերով և սյուներով՝ վերևից ներքև, ձախից աջ, կկարդանք բառեր:


Ա. պար, սպա, արև

Բ. արև, սպի, պար

Գ. պատ, արև, տապ

Դ. կոպ, սեպ, սեր

Ե. արև, հեք, հուր



17. Պատասխանի տարբերակներից չորսի շնորհիվ ձախ կողմի պատկերները նույն օրինաչափությամբ վերածվել են աջ կողմի պատկերներին: Ո՞ր տառը պատկերներից մեկը մյուսին չի վերածել նույն օրինաչափությամբ:



Ա. վ    Բ. մ    Գ. ծ    Դ. դ    Ե. ք

18. **Հուշադրյուր** բառում, ձախից աջ ուղղությամբ և առանց տառերը տեղաշարժելու, ամենաշատը քանի՞ հաջորդաբար գրված 3-տառանի տարբեր բառեր կան, որոնք պահպանել են ուղիղ ձևը:

Ա. 2    Բ. 3    Գ. 4    Դ. 6    Ե. 9

19. Պատասխանի տարբերակներից չորսում երկուական տառ նույն սկզբունքով և՛ պոչ են, և՛ գլուխ: Ո՞ր տարբերակն է այս հատկությունից զուրկ:

Ա. այծակաշի    Բ. բաժակաթերթ    Գ. գանձախույզ    Դ. ջահավառ    Ե. գետադարձ

20. **Եզր, սահման, ծագ, կողմ** բառերը նրանց «ընկերներն» են: Պատասխանի ո՞ր տարբերակի տառախմբերն են նրանք:

Ա. գ, կգ, ց, տ                      Բ. իե, ծա, կեն, հո                      Գ. մմ, սս, դմ, կմ  
 Դ. հս, հվ, արլ, արմ                      Ե. վրկ, ր, ժ, օր

**5 միավոր գնահատվող առաջադրանքներ**

21. Պատասխանի տարբերակներից ո՞րն է թաքնագրվել **ուրվապատկեր** բառում:

Ա. վուշե կարպետ    Բ. երկու պատվար    Գ. կտուրի պատվեր  
 Դ. կավե պատեր    Ե. կարի վարպետ

22. **Արծվաքիթ, երկնագույն, գմբեթաձև, վարդաբույր, հեզաձկուն** բառերը հանդիպեցին, դրանցից չորսը նույն օրինաչափությամբ ընկերներ դարձան: Ո՞ր բառը չկարողացավ ընկերանալ:

Ա. արծվաքիթ    Բ. երկնագույն    Գ. գմբեթաձև    Դ. վարդաբույր    Ե. հեզաձկուն

23. Մարիամը ջնջեց աղյուսակում կրկնվող տառերը, ապա մնացած տառերով կազմեց մի դարձվածք, որը նշանակում է՝

ը	դ	ու	ց	ե
հ	ս	վ	լ	ա
շ	գ		հ	տ
վ	բ	ր	դ	շ
լ	ե	ի	գ	ու


Ա. նեղացկոտ    Բ. գաղտնապահ    Գ. ուշիմ    Դ. խորամանկ    Ե. անկեղծ

24. Տառերը գրված են որոշակի օրինաչափությամբ: Ո՞ր տառերն են բաց թողնված:

Ա, Ե, Թ, ☼  
Մ, Ո, Ռ, ★

Ա. ժ, ի Բ. խ, ը Գ. ի, պ Դ. ու, ձ Ե. օ, ծ

25. Բերված պատկերներից վեցի անվանումներն առանց որևէ փոփոխության զույգ առ զույգ «ստանձվում» են ու կազմում երեք նոր բառ: Ո՞ր պատկերը մյուսներից ոչ մեկի հետ զույգ չի կազմում:



26. Արմենն իր նվագարաններից մեկի անվանումը հնարամտորեն «թաքցրել» է **թղթակից, ջրարջ, թիկնօթոց, աստամնաբույժ, բարեհաջող** բառաշարքում: Ո՞ր նվագարանն է թաքցրել Արմենը:

Ա. կիթառ Բ. տավիղ Գ. ջութակ Դ. շեփոր Ե. թմբուկ

27. Ի՞նչ է գաղտնագրվել նկարելուկ-հանելուկով:



Ա. դդում Բ. լեզու Գ. սոխ Դ. գդալ Ե. մեխ

28. Շարքում տառերը գրված են որոշակի օրինաչափությամբ: Ո՞ր տառն է թաքցրել մեղվիկը:

*վ, է, ե, չ, հ, վ, յ,* 

*Ա. ի   Բ. տ   Գ. ու   Դ. ն   Ե. մ*

29. **Ատոմային կայանը մշտապես կարտադրի ամենամեծ քանակով կենսականորեն անհրաժեշտ էլեկտրաէներգիա՝ հանրության պահանջները սպասարկելու համար:**

Այս նախադասության բոլոր բառերը, բացի մեկից, ունեն մի ընդհանուր հատկություն: Ո՞ր բառն է զուրկ այդ հատկությունից:

*Ա. ատոմային   Բ. մշտապես   Գ. ամենամեծ   Դ. անհրաժեշտ   Ե. կենսականորեն*

30. Հայկը ընտրեց հայոց այբուբենի տառերից մեկը, այդ տառից երկու զույգ «սոսնձեց» իրար և ստացավ քառակող գերան: Ո՞ր տառից ստացվեց քառակող գերանը:

*Ա. չ   Բ. ո   Գ. ը   Դ. ս   Ե. ու*